ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2
ՕՐԻՆԱԿԻՑ

Կազմված է 11 մայիսի 2018 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«30» հունիսի 2018 թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Անդրիաս Ղուկասյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ
211.112.1085048

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02811757

«26» 07 2019 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

05

ՀԱՅ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայ կառուցողական կուսակցությունը (այսուհետ՝ Կուսակցություն) սոցիալ-ազատականության գաղափարախոսության շուրջ համախմբված քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

1.2 Կուսակցությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական ակտերի պահանջներին համաձայն, սույն Կանոնադրության և Կուսակցության ծրագրի հիման վրա:

1.3 Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

1.4 Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ, օգտվում է իրավաբանական անձի կարգավիճակից բխող օրենքով սահմանված իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:

1.5 Կուսակցության անվանումն է՝
ա) հայերեն՝ Հայ կառուցողական կուսակցություն, հապավում՝ ՀայԿԿ:
բ) ռուսերեն՝Армянская конструктивная партия, հապավում՝ АрмКК:
գ) անգլերեն՝ Armenian Constructive Party, հապավում՝ ArmCP:

1.6 Կուսակցությունն ունի խորհրդանշան, դրոշ, կլոր կնիք, ձևաթուղթ, բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժույթով:

1.7 Կուսակցության խորհրդանշանը պատկերվում է դրոշի, կնիքի, ձևաթղթի և անհատականացման մյուս միջոցների վրա:

1.8 Կուսակցության խորդրդանշանը իրենից ներկայացնում է ճյուղերը վեր ուղղած երիտասարդ չինարի ծառի պատկեր, որը մուգ ֆոնի վրա պատկերվում է սպիտակ գույնով, իսկ բաց ֆոնի վրա՝ սև կամ մուգ կապույտ:
Կուսակցության խորհրդանշանի գունավոր պատկերը ներկայացվում է սույն Կանոնադրության բաղկացուցիչ մաս կազմող թիվ 1 հավելվածում:

1.9 Կուսակցության դրոշը իրենից ներկայացնում է լայնության և երկարության չափերի 1:2-ի հարաբերակցությամբ, կենտրոնում՝ Կուսակցության խորհրդանշանի պատկերով,մուգ և բաց կապույտ,մուգ և բաց կանաչ գունավորմամբ պաստառ: Կուսակցության դրոշի նկարագրության գունավոր պատկերը ներկայացվում է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս կազմող թիվ 2 հավելվածում:

1.10 Կուսակցության իրավաբանական հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Անտառային փ. 188/16 տուն:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կուսակցության նպատակն է Հայաստանում միջազգային համագործակցության համար բաց, ազատ և բարոյական հասարակության ձևավորումը:

2.2 Կուսակցության խնդիրներն են՝
- պետական քաղաքականության մշակումը,
- մասնակցությունը պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը,
- քաղաքական խնդիրների լուծման շուրջ սոցիալական խմբերի համախմբումը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կուսակցությանն անդամակցությունը կամավոր է և անհատական:

3.2 Կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացիները, ովքեր ընդունում են Կուսակցության Ծրագիրն ու Կանոնադրությունը և չեն հանդիսանում մեկ այլ կուսակցության հիմնադիր: Կուսակցության անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր ՀՀ Սահմանադրության կամ «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի համաձայն՝ չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:

3.3 Կուսակցության հիմնադիրները կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են կուսակցության անդամներ, Կուսակցության հիմնադիրը չի կարող միաժամանակ լինել այլ կուսակցության հիմնադիր կամ անդամ:

3.4 Կուսակցությանն անդամակցությունը կատարվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ Կուսակցության սկզբնական կազմակերպության կամ Կուսակցության նախագահի որոշմամբ:

3.5 Կուսակցության անդամը հաշվառվում է Կուսակցության որևէ սկզբնական կազմակերպությունում կամ հանդիսանում է գործադիր մարմնի անդամ կամ դրա ստորաբաժանման աշխատակից: Կուսակցության անդամության հաշվառման կարգը սահմանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը:

3.6 Կուսակցության անդամը մուծում է անդամավճար՝ մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից սահմանված չափով և կարգով:

3.7 Եթե ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Կուսակցությանն անդամակցությունը անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է Կուսակցության անդամի դիմումի հիման վրա կամ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ: Կասեցումը հանվում է նույն կարգով:

3.8 Կուսակցության անդամի անդամակցությունը դադարում է՝
- դիմումի համաձայն՝ Կուսակցությունից դուրս գալու դեպքում.
- Կուսակցությունից հեռացվելու դեպքում.
- մահվան դեպքում.
- կուսակցության լուծարման դեպքում:

3.9 Իրենց կանոնադրական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կուսակցության անդամները կարող են կանոնադրությամբ նախատեսված կարգով ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ընդհուպ՝ Կուսակցությունից հեռացման: Կուսակցության անդամի գործունեության արդյունքում խրախուսման միջոցների և կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը սահմանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կուսակցության անդամներն իրավունք ունեն

ա) ընտրելու և ընտրվելու Կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում,

բ) ներկուսակցական ընտրություններում ընտրել և ընտրվել որպես Կուսակցության անունից առաջադրվող տեղական ինքնակառավարման, պետական կառավարման ընտրովի և նշանակովի պաշտոնների թեկնածու,

գ) Կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ,
դ) ներկա լինելու Կուսակցության համագումարին, որտեղ քննարկվում է նրանց անձնական հարցերը կամ առաջարկությունները, արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ,

ե) ծանոթանալու Կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,

զ) տեղեկատվություն ստանալու Կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու Կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը, բողոքարկելու կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները,

է) կամովին դադարեցնելու իրենց անդամակցությունը:

4.2 Կուսակցության անդամները պարտավոր են՝

ա) պահպանել Կուսակցության Կանոնադրությունը;

բ) բոլոր միջոցներով աջակցել Կուսակցության Ծրագրի իրականացմանը, մասնակցել Կուսակցության գործունեությանը, անձամբ կատարել Կուսակցության ղեկավար մարմինների որոշումները և ակտիվ կերպով նպաստել դրանք կյանքի կոչելու;

գ) անցնել կուսակցական ուսուցում՝ Կուսակցության ղեկավար մարմինների կողմից որոշված կարգով;

դ) իր իրազեկության չափով մասնակցել Կուսակցության կողմից տարվող ընտրարշավների կազմակերպմանը և անցկացմանը;

ե) խորհրդարան կամ տեղական ինքնակառավարման մարմնի անդամ ընտրվելու դեպքում մտնել Կուսակցության պատգամավորական կամ ավագանու խմբակցություն և գործել Կուսակցության համագումարների և ղեկավար մարմինների որոշումներ համաձայն;

զ) չիրականացնել Կուսակցությունը վարկաբեկող գործողություններ;

է) ժամանակին տեղեկացնել Կուսակցության համապատասխան տարածքային ստորաբաժանումներին մշտական կամ հիմնական բնակվելու վայրի փոփոխության մասին:

4.3 Կանոնադրության պահանջները չկատարելու համար Կուսակցության անդամը կարող է տույժերի ենթարկվել՝նկատողություն, զգուշացում, իսկ Կուսակցության ղեկավար և կենտրոնական մարմիններում, ստորաբաժանումների ղեկավար և գործադիր մարմիններում ընտրովի պաշտոն զբաղեցնող անդամները կարող են նաև ճանաչվել զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող: Կուսակցական տույժերի կիրառման կարգը և հիմքերը որոշվում են մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

5.1 Կուսակցության համագումարը Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինն է, որն ունի Կուսակցության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք, և որի ընդունած որոշումները պարտադիր են Կուսակցության բոլոր մարմինների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների, ներկայացուցչությունների և անդամների համար: Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին:

5.2 Կուսակցության հերթական համագումարները հրավիրվում են երկու տարին մեկ անգամ՝ գլխավոր խորհրդի կողմից(որոշմամբ): Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ կարող է հրավիրվել արտահերթ համագումար: Հերթական համագումարի հրավիրումից առնվազն մեկ ամիս առաջ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը հրավիրում է հատուկ նիստ, որտեղ քննարկվում է համագումարի օրակարգի նախագիծը:

5.3 Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված ներկայացուցիչները՝ պատվիրակները:

5.4 Կուսակցության համագումարի ընդհանուր պատվիրակների թիվը, սկզբնական կազմակերպության պատվիրակների թվի և այդ կազմակերպության անդամների ընդհանուր թվի համամասնությունը, ինչպես նաև ի պաշտոնե տվյալ համագումարի պատվիրակ հանդիսացող Կուսակցության անդամների ցանկը որոշում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը:

5.5 Կուսակցության սկզբնական կազմակերպությունների պատվիրակներն առաջադրվում և ընտրվում են սկզբնական կազմակերպությունների ժողովներում՝ հերթական համագումարի հրավիրման օրից առնվազն երեսուն, իսկ արտահերթ համագումարի հրավիրման օրից՝ առնվազն տասն օր առաջ:

5.6. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե նրան ներկա են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի 1/2-ը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

5.7 Կուսակցության Համագումարը՝

ա) լսում և հաստատում է համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Կուսակցության գործունեության վերաբերյալ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի հաշվետվությունը,

բ) քննարկում և ընդունում է Կուսակցության ծրագիրը և հաստատում կանոնադրությունը, դրանց մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը,

գ) ընտրում է Կուսակցության նախագահին, որը հանդիսանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ և Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ևս չորս անդամներին,

դ) ընտրում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողով,

ե) լսում և հաստատում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,

զ) որոշում է Կուսակցության ռազմավարական, գաղափարական-քաղաքական ուղին, Կուսակցության խնդիրների իրականացման գործելակերպը,

է) որոշում է ընդունում Կուսակցության վերակազմակերպման կամ Կուսակցության լուծարման մասին,

ը) քննարկում և վերջնական որոշում է կայացնում Կուսակցության գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ:

5.8 Համագումարի որոշումները, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են բաց քվեարկությամբ, համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

5.9. Կուսակցության կանոնադրության հաստատման և ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշումներն ընդունվում են ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.10 Կուսակցության համագումարը, Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկման նպատակով, երկու տարի ժամկետով ընտրում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողով, որի անդամների թիվը հաստատում է համագումարը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Կուսակցության ղեկավար մարմինների անդամ, Կուսակցության տարածքային ստորաբաժանման ղեկավար: Կուսակցության վերստուգիչ հանձնաժողովը գործում է Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և հաշվետու է միայն համագումարին:

5.11 Կուսակցության համագումարը, ընտրված պատվիրակների ձայների մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով ընտրում է Կուսակցության նախագահին և Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի չորս անդամներին : Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Կուսակցության նախագահի կամ մշտապես գործող

ղեկավար մարմնի անդամի վաղաժամկետ ընտրությունը կարող է կատարվել համագումարի ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

6.1 Կուսակցության նախագահը Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարն է, նա՝

ա) իրականացնում է Կուսակցության և Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գործունեության ղեկավարումը,

բ) ներկայացնում է Կուսակցությունը, նրա շահերը և դիրքորոշումը պետական մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների, միությունների ու ասոցիացիաների հետ ունեցած հարաբերություններում, կամ այդ նպատակով լիազորում է Կուսակցության այլ անդամների,

գ) ղեկավարում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի աշխատանքները և համակարգում Կուսակցության բոլոր ստորաբաժանումների գործունեությունը,

դ) տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները, Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ.

ե) ստորագրում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշումները,

զ) ստորագրում և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում պետական լիազոր մարմնին ներկայացնում է Կուսակցության ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունները,

է) օրենքով սահմանված ժամկետում զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է Կուսակցության ֆինանսական և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները,

ը) կազմավորում է Կուսակցության աշխատակազմը:

թ) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

6.2 Կուսակցության նախագահը ընտրվում է երկու տարի ժամկետով և իր պաշտոնավարման ընթացքում իրավունք չունի համատեղել Կուսակցության ղեկավարի պաշտոնը Հանրապետության գործադիր իշխանության ղեկավարի պաշտոնի հետ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

7.1 Կուսակցության Գլխավոր խորհուրդը Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինն է, որի կազմի մեջ մտնում են՝

ա) Կուսակցության նախագահը,

բ) համագումարի կողմից ընտրված չորս անդամները,

գ) Կուսակցության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

7.2 Կուսակցության Գլխավոր խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

ա) սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ,

բ) Կուսակցության համագումարի որոշմամբ,

գ) Կուսակցությունից Գլխավոր խորհրդի անդամի դուրս գալու կամ հեռացվելու դեպքերում,

դ) Կուսակցության Գլխավոր խորհրդի անդամի դիմումի համաձայն,

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով Կուսակցության Գլխավոր խորհրդի անդամին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում,

զ) Կուսակցության Գլխավոր խորհրդի անդամի մահվան դեպքում:

7.3 Կուսակցության Գլխավոր խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության համագումարի որոշումների կատարման միջոցով:

7.4 Կուսակցության Գլխավոր խորհուրդը ղեկավարում է Կուսակցության նախագահը, որն ի պաշտոնե հանդիսանում է Կուսակցության Գլխավոր խորհրդի նիստերի նախագահը և պատասխանատու է Կուսակցության ընդհանուր գործունեության, Կուսակցության գաղափարական, քաղաքական և ծրագրային դրույթների կենսագործման համար:

7.5 Անհրաժեշտության դեպքում Կուսակցության Գլխավոր խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել նաև խորհրդի ընտրովի կամ նշանակովի այլ պաշտոններ (Կուսակցության Գլխավոր խորհրդի պատվավոր անդամներ, առանձին ոլորտների կամ հարցերի Գլխավոր խորհրդի պատասխանատուներ, խորհրդականներ և այլն), որոնք իրականացնում են Կուսակցության Գլխավոր խորհրդի կողմից իրենց վերապահված լիազորություններ:

7.6 Կուսակցության Գլխավոր խորհրդի հերթական նիստը հրավիրվում է նախագահի կողմից՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստը՝ նախագահի կամ

անդամների առնվազն 1/3- ի նախաձեռնությամբ: Կուսակցության Գլխավոր Խորհրդի արտահերթ նիստը հրավիրվում է նախաձեռնողի առաջարկած ժամկետում և օրակարգով:

7.7 Կուսակցության Գլխավոր Խորհուրդը, Կուսակցության գործունեությանը վերաբերող որոշ հարցերի քննարկման նպատակով, իր որոշմամբ կարող է անցկացնել ընդլայնված նիստ: Կուսակցության Գլխավոր Խորհրդի ընդլայնված նիստի՝ խորհրդի մշտական անդամ չհանդիսացող մասնակիցների ցանկը հաստատում է Կուսակցության Գլխավոր Խորհուրդը՝ ընդլայնված նիստ հրավիրելու մասին որոշմամբ: Կուսակցության Գլխավոր Խորհրդի մշտական անդամ չհանդիսացող անձինք Գլխավոր Խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով և չեն մասնակցում որոշումների ընդունման նպատակով անցկացվող քվեարկություններին:

7.8 Կուսակցության Գլխավոր Խորհուրդը հաշվետու է Կուսակցության համագումարին:

7.9 Կուսակցության Գլխավոր Խորհուրդը, յուրաքանչյուր տարվա մարտին, ամփոփելով տարածքային կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները, հաստատում է առաջիկա տարվա իր աշխատանքային ծրագիրը:

7.10 Կուսակցության Գլխավոր Խորհուրդը՝

ա) հաստատում է Կուսակցության գույքի կառավարման կարգը, տարեկան բյուջեն, հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է Կուսակցության ծախսերի նախահաշիվը,

բ) իր որոշմամբ կամ Կուսակցության արդեն իսկ ստեղծված տարածքային ստորաբաժանումների առաջարկությամբ ստեղծում (կազմալուծում) է Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները, ինչպես նաև այլ պետություններում Կուսակցության ներկայացուցչությունները,

գ) որոշում է ընդունում զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչությունները հիմնադրելու, առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ դաշինքների կամ միավորումների (այդ թվում՝ ընտրական) ստեղծելու կամ դրանց մասնակցելու, այլ պետությունների կուսակցությունների և հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ միջազգային կապեր հաստատելու և պահպանելու, միջազգային միությունների անդամ դառնալու մասին

դ) կազմում է հանձնաժողովներ և հանձնախմբեր, Կուսակցության Խորհրդի նախագահի ներկայացմամբ հաստատում է հանձնաժողովների նախագահների թեկնածությունները,

ե) հաստատում է Կուսակցության ղեկավար մարմինների, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների և աշխատանքային ծրագրերի օրինակելի ձևերը,

զ) համակարգում և վերահսկում է տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, հաստատում է տարածքային ստորաբաժանումների
տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը,

է) հաստատում է Կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերը, Կուսակցության մարտավարական սկզբունքները, նախընտրական ծրագրերը,
կարգախոսները և քարոզչական բնույթի մյուս փաստաթղթերն ու նյութերը,
Կուսակցության անունից կատարում է հայտարարություններ և առաջարկություններ, տարածում է տեղեկատվություն գործունեության մասին, կազմակերպում է գաղափարների ու նպատակների քարոզը, կազմակերպում և անցկացնում է խաղաղ, առանց զենքի հավաքներ,

ը) հրավիրում է Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումար, Կուսակցության համագումարին ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն, վերահսկում է Կուսակցության համագումարի և իր որոշումների կատարումը,

թ) սահմանում է համամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային Ժողովի, վարչապետի, գործադիր իշխանության քաղաքական պաշտոնների համար Կուսակցության թեկնածուներին ընտրելու համար ներքին կուսակցական ընտրությունների անցկացման կանոնակարգը:

ժ) հաստատում է Հանրապետության Նախագահի թեկնածուի, Վարչապետի թեկնածուի, ՀՀ Ազգային Ժողովի համամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու ցուցակը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մյուս մարմինների ընտրության, ինչպես նաև քաղաքական կամ քաղաքացիական նշանակության պաշտոններում ընտրվելու (նշանակվելու) նպատակով Կուսակցության կողմից առաջադրվող թեկնածությունները:

ժա) համակարգում տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններում ընտրված Կուսակցության անդամների գործունեությունը,

ժբ) կիրառում է կարգապահական տույժեր և խրախուսանքի միջոցներ,

ժգ) իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է ,Կուսակցությունների մասին ՀՀ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները.

ժդ) որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարն իրավազոր չի եղել.

ժե) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Կուսակցությունների տարածքային ստորաբաժանումներն ստեղծվում են տարածքային հատկանիշով՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքի վարչական շրջաններում:

8.2 Կուսակցության սկզբնական կազմակերպությունները ստեղծվում են Կուսակցության տարածքային ստորաբաժանումների խորհուրդների կողմից՝ ըստ համայնքների:

8.3 Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ղեկավարվում են երկու տարի ժամկետով ընտրված տարածքային խորհուրդների կողմից և ընդգրկում են իրենց տարածքին պատկանող սկզբնական կազմակերպությունները:

8.4 Կուսակցության տարածքային խորհուրդը իր անդամների կազմից ընտրում է ղեկավար և տեղակալ՝ երկու տարի ժամկետով:

8.5 Կուսակցության տարածքային խորհուրդը՝

ա) առաջադրում է Ազգային Ժողովի պատգամավորի թեկնածու:

բ) մասնակցում է Կուսակցության վերադաս մարմինների կազմակերպած միջոցառումներին,

գ) Կուսակցության վերադաս մարմիններին տեղեկատվություն է տրամադրում կազմակերպության գործունեության, տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, հանդես է գալիս Կուսակցության գործունեությանն առնչվող նախաձեռնություններով,

դ) կատարում է Կուսակցության վերադաս մարմինների հանձնարարականները:

8.6 Սկզբնական կազմակերպության անդամների քանակը պետք է լինի առնվազն հինգ: Սկզբնական կազմակերպությունն ստեղծման, գործունեության և լուծարման կարգը սահմանում է Կուսակցության Գլխավոր Խորհուրդը:

8.7 Կուսակցության սկզբնական կազմակերպությունը՝

ա) առաջադրում է թեկնածուներ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրվի պաշտոնների համար:

բ) մասնակցում է Կուսակցության վերադաս մարմինների կազմակերպած միջոցառումներին,

գ) Կուսակցության վերադաս մարմիններին տեղեկատվություն է տրամադրում կազմակերպության գործունեության, տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, հանդես է գալիս Կուսակցության գործունեությանն առնչվող նախաձեռնություններով,

դ) կատարում է Կուսակցության վերադաս մարմինների հանձնարարականները:

8.8 Սկզբնական կազմակերպության ղեկավարը միաժամանակ հանդիսանում է տարածքային խորհրդի անդամ: Այն սկզբնական կազմակերպությունը, որի ղեկավարը ընտրվում է տարածքային խորհրդի ղեկավար կամ տեղակալ, ընտրում է նոր ղեկավար:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

9.1 Կուսակցության գործունեության վերահսկման նպատակով Համագումարի կողմից մեկ տարի ժամկետով ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով:

9.2 Վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող լինել Կուսակցության Գլխավոր խորհրդի անդամ, Կուսակցության տարածքային ստորաբաժանումների ղեկավար:

9.3 Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ:

9.4 Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է Կուսակցության համագումարին:

9.5 Վերստուգիչ հանձնաժողովը՝
- վերահսկում է Կուսակցության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները:
- ստուգում է դրամական միջոցների մուտքերի և ելքերի օրինականությունը:
- վերահսկում է Կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները:
- ստուգում է Կուսակցության գույքի հետ կապված գործընթացները:
- վերահսկում է տարածքային ստորաբաժանումների գործունեությունը:

10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

10.1 Կուսակցությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, դրամական, փոխադրական միջոցներ և այլ գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից: Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է:

10.2 Կուսակցության սեփականությունը գոյանում է կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), օրենքով թույլատրված նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

10.3 Կուսակցությանը նվիրաբերված, ինչպես նաև նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված և (կամ) ձեռք բերված գույքի սեփականատերը Կուսակցությունն է: Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ: Կուսակցությունն իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը իր գույքով պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:

10.4 Կուսակցության ղեկավար մարմինները, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները Կուսակցության կողմից իրենց հատկացված գույքը տիրապետում և օգտագործում են Կուսակցության Գլխավոր Խորհրդի կողմից նախատեսված սահմաններում և կարգով:

10.5 Կուսակցության դրամական միջոցները ձևավորվում են՝

ա) անդամավճարներից,

բ) օրենքով թույլատրված նվիրատվություններից,

գ) օրենքով նախատեսված բյուջետային ֆինանսավորումից,

դ) քաղաքացիական-իրավական գործարքներից և օրենքով չարգելված այլ մուտքերից:

10.6 Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում են Կուսակցության նախագահը և սկզբնական կազմակերպությունների ղեկավարները՝ Կուսակցության Խորհրդի կողմից սահմանված կարգով:

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Կուսակցության վերակազմակերպումը և (կամ) լուծարումը կարող է կատարվել Կուսակցության համագումարի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միայն այլ կուսակցության (կուսակցությունների):

11.2 Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Կուսակցության Գլխավոր Խորհուրդը կամ Կուսակցության համագումարի պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր առաջարկով:

11.3 Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման մասին որոշումն ընդունվում է Կուսակցության ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

11.4 Համագումարի կողմից Կուսակցության վերակազմակերպման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է ժամանակավոր հանձնաժողով, որն իրականացնում է Կուսակցության վերակազմակերպման հետ կապված և համագումարի որոշմամբ նախատեսված աշխատանքները:

11.5 Համագումարի կողմից Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է լուծարման հանձնաժողով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները, ինչպես նաև իրականացնում է Կուսակցության լուծարման հետ կապված աշխատանքները: Կուսակցության լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

11.6 Կուսակցության լուծարման նախաձեռնությունը համագումարի կողմից մերժվելու դեպքում, այդ մասին որոշման ընդունման պահից, դադարեցվում է լուծարման նախաձեռնությամբ հանդես եկած կուսակցության անդամների անդամակցությունը և անհրաժեշտության դեպքում կատարում նոր ընտրություններ:

11.7 Կուսակցությունը լուծարվում է նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Եթե Կուսակցության լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր չէ, ապա կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը: Իսկ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազոր չլինելու դեպքում կուսակցությունը լուծարվում է կուսակցության հիմնադիրներից մեկի որոշմամբ: Այս դեպքում կուսակցության լուծարման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշումը կայացնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կուսակցության համագումարը կամ մշտապես գործող ղեկավար մարմինը այլ որոշում չի կայացրել:

ՀԱՅ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավելված 2